

□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□□□□, □□□□□□□□□ □□□□ □□□□□□□□□ «□□□□□□□□□□» □□□□□□□□□ □□□□□□
□□□□□□□□ □□□□□□□□□ (□□□□□□□□□□) □□□□□□□□ ***60-***□□□□□□□□

Երբ Թբիլիսիի 74-րդ հայկական դպրոցի սան, 14 տարեկան Ռաֆայել Գրիգորյանի գրական թոթովանքը տպագրվեց երեւանյան «Պիոներ կանչ» մանկա-պատանեկան թերթում, նա հեռու էր մտքից, որ շարունակվելու է գրականության հանդեպ իր այդ պահից անգիտակցաբար սկսված հետաքրքրությունը…
Հետո եկավ «Վրաստան» թերթի խմբագրություն, ծանոթացավ մշակույթի բաժնի վարիչ, անվանի արձակագիր Բենիկ Սեյրանյանի (1913-2003թթ.) հետ, ու նրա խրախուսանքով, թերթի էջերում սկսեց երեւալ Ռաֆայել Գրիգորյան հեղինակի անուն-ազգանունը՝ գրական, լրագրողական հրապարակումներով: Կարճ ժամանակ անց՝ նրա ստեղծագործություններն ընդգրկվում են վիրահայ գրականությունը ներկայացնող «Կամուրջ», ապա եւ՝ «Վերնատուն» տարեգրքերում, դառնում է Վրաստանի ժուռնալիստների միության անդամ:

Գրական մուտքի նշանավորումն էր, անշուշտ, պատմվածքների առաջին՝«Հանդիպում» (1990թ.), ժողովածուն, որն իսկույն նվաճեց ընթերցողների համակրանքը: Անդրանիկ գրքին հաջորդեցին նորերը՝ մանկական հեքիաթների եւ պատմվածքների ու մանրապատումների՝ «Ամենաթանկագին նվերը» եւ «Վերադարձ» ժողովածուները:

Ռաֆայել Հրաչյայի ստեղծած մարդկային դիմանկարներն ու կերպարները հյուսված են սրտամոտ խոսքով: Եվ վկայում են, որ նա հիանալի գիտի մարդկային հոգսերը, երազանքները, համառությունն ու անկոտրում կամքը: Ամենաբնորոշը, թերեւս, այդ կերպարներում՝ մարդուն ապրեցնող՝ բարու հաղթանակի հույսն ու հավատն է:
Ռաֆայել Հրաչյան այսօր էլ, իր մարդկային նկարագրին հատուկ եռանդով ու նվիրումով, շարունակում է գրական-ստեղծագործական մտորումները եւ առաջիկայում նոր գործերով կներկայանա ընթերցողին:
Հիմա, 60-ամյակի շեմից անցած ճանապարհը դիտելիս, նա երիցս օրհնում է իր կյանքի այդ կարեւոր իրադարձությունը եւ խոնարհվում այն իրականացնող ուսուցչուհու՝ Վիկտորյա Գրիգորյանի հիշատակին:
Ռաֆայել Գրիգորյանը շուրջ 23 տարի է, ինչ աշխատում է Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնում, զբաղեցնելով տարբեր վարչական պաշտոններ:
Վիրահայ մշակույթին մատուցած ծառայությունների համար՝ նա արժանացել է Վրաստանի պետական՝ «Պատվո մեդալ»-ի:
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ